ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ

30 մայիսի 2012 թվականի N 2-Ն

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ և 26-րդ կետերով

Ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրովի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմ /գյուղապետարան/» բյուջետային հիմնարկը վերակազմակերպել «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրովի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի:
2. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրովի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
3. Առաջարկել համայնքի ղեկավարին սահմանված կարգով իրականացնել կառավարչական հիմնակի պետական գրանցումը:

Ավագանի՝ ———————— Հ. Մնացականյան
———————— Հ. Եղիազարյան
———————— Լ. Գիվարգիզովա
———————— Ս. Ղևոնդյան
———————— Կ. Բաղալյան
———————— Գ. Միրզոյան
———————— Կ. Կակոյան

կողմ 7 դեմ 0

Դիմիտրով համայնքի ղեկավար Ա. Իոնանով